ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ.

ԿԱՏԱՐԵԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 24 օգոստոսի (ՏԱՍՍ-ի թղթ.)։ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական դեպուտատների մարզային սովետի նստաշրջանը այսօր որոշում ընդունեց «1988—1995 թվականներին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու միջոցառումների մասին» ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշման իրականացման կոնկրետ ծրագիր մշակելու մասին։ Մարզային սովետի գործկոմին հանձնարարված է ծրագիրը կազմելիս անցկացնել որոշման միջոցառումների լայն քննարկում և հաշվի առնել Լեռնային Ղարաբաղի աշխատավորական կոլեկտիվների արտահայտած դիտողություններն ու առաջարկությունները։

Ինչպես նշված է ժողովրդական դեպուտատների մարզային սովետի նստաշրջանի որոշման մեջ, Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ՍՄԿԿ Կենտկոմի ու ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումն իրականացնելու աշխատանքը միութենական և հանրապետական մինիստրությունների ու գերատեսչությունների և մարզային մարմինների կողմից առայժմ անբավարար է կատարվում։

ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատների սովետը հավանություն տվեց Հայկական ՍՍՀ-ի ձեռնարկությունների հետ տնտեսական կապեր հաստատելու, հոգևոր ու մշակութային կյանքի հարցերում ավելի սերտորեն համագործակցելու մարզի աշխատավորական կոլեկտիվների նախաձեռնությանը։

Լեռնային Ղարաբաղի ժողովրդական դեպուտատների սովետը դիմեց ՍՍՀՄ Գերագույն սովետի Ազգությունների սովետի հանձնաժողովին, խնդրելով առաջարկություններ ներկայացնել Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը փուլ առ փուլ լուծելու վերաբերյալ։

Նստաշրջանը Ս. Ա. Բաբայանին ընտրեց Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների սովետի գործադիր կոմիտեի նախագահ։ ՏԱՍՍ-ի թղթակցի հետ կայացած հարցազրույցի ժամանակ նա ասաց, որ ղարաբաղցիները համաքաղաքային միտինգում այն հետևությանը հանգեցին, որ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության որոշումը ընդունելի ելք է ստեղծված կացությունից։ Սակայն միևնույն ժամանակ այսօր նստաշրջանում որոշում ընդունվեց ապագայում դիմել Ազգությունների սովետի հանձնաժողովին, առաջարկելով Լեռնային Ղարաբաղի պրոբլեմին՝ կապված նրա վարչական ենթակայության հետ, վերստին անդրադառնալ, հաշվի առնելով աշխատավորական կոլեկտիվների կարծիքները և այն ցանկությունները, որ արտահայտեցին դեպուտատները։

— Իսկ այսօր մեր բոլոր գործողությունները նպատակամղված կլինեն մարդկանց համար այնպիսի իրադրության ստեղծմանը, որի պայմաններում նրանք կարողանան նորմալ ապրել ու աշխատել, ընդգծեց Ս. Ա. Բաբայանը։

Նստաշրջանի աշխատանքին մասնակցում էր և ելույթ ունեցավ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում ՍՄԿԿ Կենտկոմի ու ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ներկայացուցիչ Ա. Ի. Վոլսկին։

106-ամյա Նուբար Սիմոնյանը ծոռնուհու հետ

(Արմենպրես)